ՀՆԿ/PIM	**Հանրային ներդրումների կառավարում** Հանրային ֆինանսների կառավարման շրջանակներում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, ընտրության և դրանց իրականացման նկատմամբ կիրառելի կարգավորումների և վերահսկողական մեխանիզմների համակարգ
Հանրային ներդրումային ծրագիր կամ **ծրագիր**	Պետական բյուջեի (այդ թվում՝ ՀՀ կառավարության կնքած միջազգային վարկային կամ դրամաշնորհային պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների) հաշվին ֆիզիկական կամ այլ հիմնական միջոցների ձեռքբերում կամ էական բարելավում, ինչպես նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր: Ընդ որում, էական բարելավում է համարվում հիմնական միջոցի արտադրողականության բարձրացմանը կամ շահագործման ժամկետի ավելացմանն ուղղված ակտիվի վերականգնումը, վերակառուցումը կամ ընդլայնումը: Այն ծախսերը, որոնք ունեն պարբերական բնույթ և ուղղված են ակտիվի ներկա վիճակի պահպանմանը կամ գոյություն ունեցող մաշված ակտիվի փոխարինմանը չեն համարվում հանրային ներդրումային ծրագիր
Հանրային ներդրումային ծրագրի (ծրագրի) նախագնահատում	Ծրագրի հայեցակարգի հիման վրա ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված հանրային ներդրումային ծրագրերի գնահատման չափորոշիչների համաձայն իրականացված նախնական գնահատում
Հանրային ներդրումային ծրագրի (ծրագրի) գնահատում	Ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության հիման վրա ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված հանրային ներդրումային ծրագրերի գնահատման չափորոշիչների համաձայն իրականացված գնահատում
ՊՄԳ/PPP	**Պետություն-մասնավոր գործընկերություն** ՊՄԳ-ն հանրային և մասնավոր գործընկերների միջև ծառայությունների մատուցման պայմանագրային հարաբերություն է, որն ուղղված է ենթակառուցվածքների ֆինանսավորմանը, կառուցմանը, վերանորոգմանը, կառավարմանը, պահպանմանը, շահագործմանը և հիմնված է մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացի (ՄԳԸԳ) միասնական, մրցակցային, թափանցիկ, հրապարակային սկզբունքներով և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման երկարաժամկետ համագործակցության վրա

ՊՄԳ ծրագիր	**Պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր** Ծրագիր, որը ներառում է ՊՄԳ պայմանագրի վրա հիմնված և ՊՄԳ չափանիշներին համապատասխանող համագործակցային հարաբերություններ հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև
Հնարավոր ՊՄԳ ծրագիր	Հանրային ներդրումային ծրագիր, որը կարող է իրականացվել ՊՄԳ ձևաչափով, եթե կատարված վերլուծությունների արդյունքում ապացուցվի դրա համապատասխանությունը ՊՄԳ չափանիշներին
ՊՄԳ պայմանագիր	**Պետություն-մասնավոր գործընկերության պայմանագիր** ՊՄԳ ծրագրի իրականացման նպատակով հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև միջնաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով կնքված պայմանագիր
ԼՄ	**Լիազոր մարմին** Պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին
ԻՄ	**Իրավասու մարմին** ՀՀ կառավարություն, պետական կառավարման համակարգի մարմին, որը պետական կառավարման որոշակի ոլորտում մշակում և իրականացնում է քաղաքականություն, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմին
ՀԳ	**Հանրային գործընկեր** Իրավասու մարմին, որը ՊՄԳ պայմանագիր է կնքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ
ՄԳ	**Մասնավոր գործընկեր** Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստեղծված և գործող մասնավոր իրավաբանական անձ, որի հետ հանրային գործընկերը կնքել է ՊՄԳ պայմանագիր
Արդյունքի վրա հիմնված վճարումներ	Մասնավոր գործընկերոջ կողմից վաճառված ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց հաճախորդների և (կամ) հանրային գործընկերոջ կողմից մասնավոր գործընկերոջը կատարվող վճարումներ

Հասանելիության վճարներ	Հանրային գործընկերոջ կողմից մասնավոր գործընկերոջը կատարվող պարբերական վճարումներ, որոնք հիմնված են ՊՄԳ պայմանագրով սահմանված կատարողական ցուցանիշներին համապատասխանող հանրային ենթակառուցվածքի հասանելիության վրա
Հանրային ենթակառուցվածք	Հանրային հետաքրքրություն կամ շահ ներկայացնող հիմնական միջոց (այդ թվում՝ շենքեր, կառուցվածքներ, սարքավորումներ) և (կամ) ոչ նյութական ակտիվ, որն օգտագործվում է հանրային ծառայությունների մատուցման նպատակով (կամ դրա առնչությամբ) և որի շահագործումը և (կամ) կառուցումը և (կամ) բարելավումը և (կամ) տեխնիկական սպասարկումն ապահովում է մասնավոր գործընկերը՝ ՊՄԳ պայմանագրի համաձայն
Ռիսկերի մատրից	Հնարավոր ՊՄԳ ծրագրի և ՊՄԳ ծրագրի նախագծի համար կազմվող հաշվետվություն, որտեղ նկարագրվում է ծրագրին բնորոշ յուրաքանչյուր ռիսկ, ռիսկի հետևանքը, դրա կառավարման և մեղմացման մոտեցումը, ինչպես նաև դրա համար պատասխանատու գործընկերը
ՏՇՆԴ/EIRR	**Տնտեսական շահութաբերության ներքին դրույք** ՏՇՆԴ-ն տնտեսական պլանավորման համար օգտագործվող չափիչ՝ պոտենցիալ ներդրումների հասարակության համար զուտ օգուտները գնահատելու համար: Տնտեսական շահութաբերության ներքին դրույքը զեղչման այն դրույքն է, որի դեպքում գնահատվող ծրագրի բոլոր տնտեսական օգուտների և ծախսերի զուտ ներկա արժեքը հավասարվում է զրոյի
ՖՇՆԴ/FIRR	**Ֆինանսական շահութաբերության ներքին դրույք** Կապիտալ բյուջետավորման համար օգտագործվող չափիչ՝ պոտենցիալ ներդրումների շահութաբերությունը գնահատելու համար: Ֆինանսական շահութաբերության ներքին դրույքը զեղչման այն դրույքն է, որի դեպքում գնահատվող ծրագրի ֆինանսական եկամուտների և ծախսերի զուտ դրամական հոսքերի զուտ ներկա արժեքը հավասարվում է զրոյի
ԶՆԱ/NPV	**Զուտ ներկա արժեք** Զուտ ներկա արժեքը գնահատվող ծրագրի իրականացման ընթացքում դրամական միջոցների ներհոսքի և արտահոսքի ներկա արժեքների տարբերություն, որի հաշվարկման ընթացքում օգտագործվող դիսկոնտավորման տոկոսադրույքը սահմանվում է ՊՄԳ ընթացակարգերով

ՓդԱ/VFM	Փողի դիմաց արժեք Համանման կամ համեմատելի հանրային ենթակառուցվածք կամ հանրային ծառայություն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր կարգով իրականացված լավագույն նմանատիպ ծրագրի արժեքի և գնահատվող ծրագրի իրականացման ծախսերի տարբերություն, այսինքն՝ ենթակառուցվածքային ծրագիրը հավանական է ավելի մեծ արժեք ապահովի ՊՄԳ ձևաչափով իրականացման դեպքում, քան ավանդական գնումների եղանակով իրականացման պարագայում
Ֆիսկալ առումով մատչելի	ՊՄԳ ծրագիրը չի հանգեցնում ՀՀ կառավարության սահմանած ընդհանուր պայմանական պարտավորությունների առավելագույն սահմանաչափի գերազանցմանը
ՆՏՀ/PFS	**Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում (pre-feasibility study)** Հանրային ներդրումային ծրագրին առնչվող էական նշանակություն ունեցող բոլոր հարցերի, այդ թվում՝ տնտեսական, ֆինանսական, տեխնիկական, իրավական, իրականացման ժամկետների և հնարավոր այլընտրանքային տարբերակների վերաբերյալ կատարված նախնական ուսումնասիրություն, որի արդյունքում տրամադրվում է ծրագրի իրականացման հնարավորության, ինչպես նաև ռիսկերի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը
ՏՈՒ/FS	**Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (feasibility study)** Հանրային ներդրումային ծրագրին առնչվող էական նշանակություն ունեցող բոլոր հարցերի, այդ թվում՝ տնտեսական, ֆինանսական, տեխնիկական, իրավական, իրականացման ժամկետների և հնարավոր այլընտրանքային տարբերակների վերաբերյալ կատարված ուսումնասիրություն, որի արդյունքում տրամադրվում է ծրագրի իրականացման հնարավորության, ինչպես նաև ռիսկերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն
ՊՄ	**Պայմանական պարտավորություններ** Պարտավորություն, որի կատարումը պարտադիր է դառնում այն պահին կամ դեպքում, երբ կամ եթե ի հայտ են գալիս դրա պարտադիր դառնալու պայմանները: Օրինակ՝ երաշխավորի ստանձնած պարտավորությունը, որի կատարումը պարտադիր է դառնում, եթե երաշխավորված անձը թերանում է կատարել երաշխավորված պարտավորությունը
Ներդրումային կոմիտե	Տնտեսական ոլորտի համակարգումն իրականացնող ՀՀ փոխվարչապետի ղեկավարությամբ գործող աշխատանքային կոմիտե, որի կազմը և գործունեության կարգը սահմանվում են ՀՀ կառավարության հաստատած կարգով